

արժէքը՝ որ ամենից խեղճին էլ միջոց է տուել մի բան աւել-
լացնելու մարդկային պատմութեան գանձանակի վերայ, և այդ-
պէս ամենամեծ չափով բարձրացրել է մարդկութեան արժէքը՝
իւր իսկական բարձրութեան վերայ դրել: Այդ բարձրու-
թիւնից կախուած Աստուծոյ արքայութեան կշիռքի մի նժարի
մէջ է ամենամեծ ու ամենավսեմ կրօնական գաղափա-
րը—Աստուած մեր Հայրն է. միւսի մէջ պէտք է դնենք
ամենավեհ ու ամենաողբերիչ բարոյական համոզումը—Աս-
տուծոյ որդի կոչուելու արժանիքն ունինք և լինելու պար-
տականութիւնը:



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

ԺԷ. ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԸ

Գլուխ Ա.

ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ.

Մելքիսէթի կաթողիկոսութիւնը, որը քառորդ դա-
րից աւելի տևեց (1593—1626 թ.), Հայոց եկեղեցւոյ
պատմութեան ամենասարսափելի շրջաններից մէկն էր: Քա-
ղաքական անտանելի դրութիւնը Հայոց եկեղեցւոյ և առ-
հասարակ հայ տարրի վերայ բերել էր մի յուսահատ թու-
լութիւն, որ երկար ժամանակ շահագործեց Մելքիսէթ
կաթողիկոսը: Տաթևացու զպրոցի հոգին և եռանդը, որ
գարեր շարունակ փնացել էր Հայոց եկեղեցւոյ մէջ, այժմ
կարծես բոլորովին պաղել էր: Այդ զպրոցի աշակերտներէն
Սրապիոն տիեզերալոյս վարդապետի ջանքերը ս. Էջմիածնի

նորոգութեան համար՝ մեծամեծ խոչընդոտների հանդէպ խորտակուեցան:

Բայց երկար չաւեց այս յուսահատ շրջանը: Քաղաքական հորիզոնը շուտով պարզուեց: Պարսիկները Նահաբասի առաջնորդութեամբ տիրեցին ամբողջ Արևելեան Հայաստանին և Վրաստանին և այդ տեղերում հաստատեցին իրենց իշխանութիւնը, որն աւելի տանելի էր և ազատ՝ Օսմանցւոց կոյր Քանաթիկոսութիւնից: Այստեղ նահանգները աճուրդի չէին հանուում և նահանգապետները պատահական մարդիկ չէին, այլ խաներ: Պարսիկ նահանգապետի կամ խանի ամենալաւ տիպար է Ամիրգունէ Երեանի խանը՝ մի քաջ, խելօք, նոյն իսկ հայասէր իշխան, մի հպարտ և արդարակորով ասպետ, այդպէս են գոնէ նկարագրում ժամանակի պատմիչները: Սա փրկեց Արարատեան աշխարհը կատաղեալ անկումից, քշեց աւազակ Զալալիներին, հպատակներին հայրաքար խնամեց: Զանազան ժամանակ արշաւելով Վան, Ալաշկերտ և այլ տեղեր, բերեց այդ տեղերից հայ գաղթականութիւն և բնակեցրեց Եջմիածնի և Ապարանի գաւառներում: Ժողովուրդը այստեղ ապահովութիւն գտնելով՝ աւեր և անապատ երկիրը շէնքրեց և սկսեց մի քիչ ազատ շունչ քաշել:

Քաղաքական այս բարեյաջող պայմանների մէջ նոր ի նորոյ հանդէս եկաւ հայ ազգի և եկեղեցւոյ կենսունակութիւնն ու ոյժը, սկսուեց հաւատի և ոգևորութեան շրջանը: Հաւատ դէպի բարին, դէպի գործը և դէպի գեղեցիկ ապագան՝ ահա թէ ինչն է բնորոշում գրեթէ մնացած ամբողջ դարաշրջանը: Այս դարում դուրս են գալիս եկեղեցական կեանքի մէջ հերոսներ, որոնց ամբողջ հերոսութիւնը բղխում է առ Բարձրեալն ունեցած անդրդուելի հաւատից, այդ հաւատը դարձնում է նոցա մի գործիք, որով իրականանում է բարի Աստուծու կամքը, կարելի են դառնում մեծ և բարի գործեր: Այսպիսի ազգային եկեղեցական ոգևորութիւն, այսպիսի լաւատես հաւատք Տաթևացու, կամ աւելի լաւ ասած՝ արևելեան վանական դըպրոցի աւանդն էր: Ահա թէ ինչու մի նշանաւոր արևելեան

վարդապետից ժառանգաբար ստացած գաւազանը այդչափ մեծ նշանակութիւն ունի Դավրիժեցու և ժամանակակիցների աչքում:

Ամիրի Սրապիոն եպիսկոպոսը, որը փորձեց հայրապետական աթոռը իւր անկումից փրկել, Տաթևացուց էր ժառանգաբար ստացել իր գաւազանը: Դավրիժեցու յառաջ բերած վարդապետների ցանկից երևում է, որ Տաթևացու դպրոցը աւելի յաջող պայմանների պատճառով շարունակում էր գոյութիւն ունենալ Բաղէշի և Վանայ կողմերում: որտեղ և սովորել էր Սրապիոնը: Սրապիոնն ևս իւր բազմաժամանակեայ վարժապետական գործունէութեամբ տուեց հայ եկեղեցուն արժանաւոր հոգեւորականների, ինչպիսիք են՝ Գրիգոր Կեսարացին, որը մի ներբողեանով «Առ վարժապետ իւր Սրապիոն կաթողիկոս Հայոց», գրած 1607 թ-ին, և իւր երկու դանձերով «Վասն մահուան Գրիգորի կաթողիկոսի Ուռհայեցւոյ» գովեց և ողբաց իւր մեծ վարժապետին, նրանից պահելով մի սուրբ աւանդ, մոցնել տպագրութիւն Հայոց մէջ, — և Մովսէս Սիւնեցին, որը 17-րդ դարի լուսաւորիչն եղաւ և Զաքարիա Վաղարշապատցու ասելով «Տիեզերահռչակ երկրորդ լուսատու Հայոց և վերստին նորոգող Ս. Էջմիածնի» կրթեալ և վարժեալ ի մամուլս առաքինութեան ներքոյ ձեռին Սրապիոն եղեսացւոյ»:

Մովսէս Սիւնեցին Սիւնիքի Աճանոն գաւառի Խոտանան գիւղից էր, ծնունդ 1577 թուին, 15 տարեկան հասակում արեղայ է դառնում և աշակերտում Սրապիոնին: Դժբախտաբար Սրապիոնը շուտով մեռնում է, բայց վախճանուելուց առաջ կանչում է իւր մեծ աշակերտ Գրիգոր Կեսարացուն, նորա խնամոցն է յանձնում Մովսէսին և պատուիրում է նորան վարդապետական գաւազան տալ: Մովսէսը երկար ժամանակ սորան ևս աշակերտելուց յետոյ իրաւունք է ստանում ուխտի գնալ Նրուսաղէմ, որտեղից, Դավրիժեցու վկայութեան համաձայն, դուրս եկաւ շրջելու Եգիպտոս, Ապտաց աշխարհը, «Վասն զի վանորայք և անապատք բազումք գոն, յորում բնակեալ են բազմահոյլ միաբանք՝ կարգօք և սահմանօք կրօնաւորականօք, որք ունին զկարգաւորութիւն ա-

մենայն իրաց ժամատեղաց և սեղանատեղեաց և զգեստուց և խստակացութեանց և կրօնաւորական ժուժկալութեան և այլ ամենայն գործոց. և ի մէջ նոցա շրջելով, հարցանելով տեղեկանայր ամենայնի*։ Վանական կարգերին ծանօթանալուց յետոյ, նա կարգուում է լուսարար Երուսաղէմում Ս. Յարութեան տաճարին։ Այստեղ ահա նորան հանդիպում են երկու հոգի արեւելեան վարդապետներից. մէկը՝ Սարգիս Յափնեցին, Սաղմոսավանքի առաջնորդը, որի մէջ մի մեծ հոգեւոր յեղաշրջութիւն էր կատարուել այն օրից, երբ նա Արագածի վրայ գտնում է մի սուրբ ճգնաւորի մեռած մարմին, և այդ առիթ էր եղել նորա ուխտի գնալուն. միւսը Կիրակոս վարդապետ Տրապիզոնցին, որը նոյնպէս դժգոհ ժամանակի ընդհանուր դրութիւնից միանում է Սարգսին, գալիս է Երուսաղէմ։ 1609 թուին Երուսաղէմում այս երեք անձնաւորութիւնները մտադրուում են մի վանք հիմնել, ուր վանական բոլոր կարգերը խոհեմութեամբ պահուէին և վանքի միաբանների համար ճգնական կեանք և մշտամրմունջ ժամապաշտութիւնն անհրաժեշտ պահանջ լինէր։ Սարգիսը և Կիրակոսը վանքի համար յարմար տեղ Պաղեստինում էին որոնում, եթէ բարեբախտաբար Մովսէսը չլինէր, որը մատնացոյց արաւ Տաթևի կողմերը իբր յարմար և ապահով վայր. ապա թէ ոչ նոցա հիմնելիք վանքը Պաղեստինում աղդեցութիւն չէր ունենայ հայ եկեղեցու և Մայր Աթոռի վերաբերմամբ։ Այսպէս ուրեմն Մովսէսի խորհրդով երկու հոգեւորականները դառնալով Երուսաղէմից գնում են Տաթև և երկար վարանումից յետոյ ընտրում են հին Թանահատի վանքի մօտերը, և 1610 թուին կանգնեցնում են իրենց վանքը, որի տնտեսական և վարչական մասի հոգացողութիւնը ընկնում է Սարգիս եպիսկոպոսի, իսկ ուսումնականը Կիրակոս վարդապետի վերայ։ Եւ ահա այն աշխարհը, ուր ծաղկել էին մի ժամանակ Թանահատի վանքը և Սիւնեաց վարդապետարանը, հիւրընկալեց կրկին այս կրօնական եռանդով ոգևորուած մարդկանց և սոցա աշակերտ-

* Տես Դավրիժեցի 285 էջ։

ներին, որոնք հայ եկեղեցու անկումը տեսնելով՝ պիտի փրկեին և նոյն դերը խաղային, ինչ որ խաղացել էր ԺԱ. դարում Կիււնիի վանքը կաթողիկ եկեղեցու վերաբերմամբ:

Նատ չէր անցել տյն օրից, երբ վերանորոգիչ վանքի հիմքն էր դրուում, որ Պօղոս անուհով մի վարդապետ, ծննդեամբ Մոկացի՝ մի եռանդուն եկեղեցական, աշակերտ Վարազայ Զաք կոչուած վարդապետին, քարոզչական դաւադանը ձեռքին, քարոզելով, հալածուելով՝ հասնում էր Դավրէժ: Այստեղից նա անցաւ Երասխը, մտաւ Գողթն գաւառ, գիւղից գիւղ, քաղաքից քաղաք շրջելով՝ քարոզում էր պարզ կենցաղ, ճգնական կեանք, նորոգում էր եկեղեցիների, հաստատում էր դպրոցների, հաւաքում էր աշակերտներ և ուսուցանում նոցա: Ահա այս աստուածառաք քարոզիչն ևս քիչ յետոյ յարեցաւ Սիւնեաց անապատին, որտեղից նա ժամանակ առ ժամանակ դուրս գալով՝ իւր առաքելութիւնն էր առաջ տանում և նորից վերադառնում նոյն վանքը, իբրեւ մի խաղաղ և ապահով նաւահանգիստ:

Արդարեւ Հայաստանի այդ անկիւնը պէտք էր ամենաապահով վայրը համարել, որովհետեւ գտնուում էր մի Հախնաղար անուհով հայ մելիքի իշխանութեան ներքոյ: Անշուշտ այս քաղաքական ապահովութիւնն ևս գլխաւոր պատճառներից մէկն էր, որով կարողացաւ այդ վանքը բարգաւաճել և կարճ միջոցում հրապուրել բազմաթիւ աշակերտների և նշանաւոր վարդապետների, որոնցից մէկն էր Ներսէս Բեղլու Մոկացին, որ գրել է մի ոտանաւոր ներբողեան այս անապատի հիմնարկութեան առթիւ հետեւեալ խորագրով. «Ներբողեան գովեստի չորեցունց արանց, որ եղէն սկիզբ անապատի կարգեալ յազգս մեր»*: Այս 15 ոտնեան ոտանաւորով ներբողեանը շատ գեղեցիկ կերպով արտայայտում է այն հիացմունքն ու ոգևորութիւնը, որ պատճառել է ժամանակակիցներին այդ անապատը և որը երևում է նաև ուրիշ յիշատակարաններից:

Ներբողեանը սկսուում է մի հրաւերով. «Այլթելով

* Կ. ցուցակ № 51:

ծափա հարէք ի լսել ճառիս երանական, — որովհետեւ նա պիտի պատմի թէ ինչպէս ընկած էին հայ ազգն ու եկեղեցին, բայց Աստուած ձեռք երկարացրեց և բարձրացրեց անկման առաջը առնուեցաւ անապատի հաստատուելովը, որի չորս նշանաւոր սիւներին նա պիտի գովէ: Այս առաջարկութիւնից յետոյ նա առանձին առանձին գովում է այդ չորս սիւներին. առաջինը գովասանքի է արժանանում հայկազն մէլիք Հախնազարը, ոչ միայն նորա անչափ քաջութեան համար, այլ որ «Անապատի սիւն լինէր, զրկէր զթով հայրական». երկրորդ սիւնը Պօղոս վարդապետին է համարում, որի անխոնջ քարոզութիւնը պատմելուց յետոյ, ցաւելով յիշում է որ առաջնորդները և աբեղաները նորա դէմ զինուեցան, պարսից խաների և կաթուղիկոսի մօտ գնացին գանգատուելու և նորա լուսաւոր ճանապարհը խափանելու: Այնուհետեւ նա դառնում է գովելու Սարգսին և Կիրակոսին, որոնց լուսաւոր աստղեր է համարում: Բուն նիւթից յետոյ գալիս է կրից տեղին, ուր պատկերաւոր ոճով նոցա գործերն է փառաբանում. իսկ նոցա գործն է քարոզել, թէ «Պարտ է զմարմնոյն թողուլ զհոգւոյն լինել պաշտպան», և նա ոգևորուած աւելացնում է.

«Ահա նորահրաշ հնչիւն դեռաբոյս անյայտական՝
նոր երգ, նորներբողեան, նոր կական ի ձայն ցնծութեան»:

Ամէն տեղ ժրաջան մշակները ճշմարտութիւն են քարոզում, որով երաշտ գետինը արտասուքի ցողով ցողուում է և խոպան երկիրը բերրի դառնում.

«Որով կարգ եկեղեցւոյ կանոնօք սահմանադրեցան
եւ երկու պատուական ակունքս, որ յերկու ծառ
ահարօնեան,

Երկու ձիթենի ուղէշք, որ յերկրի նոր արմատական՝
Պարարտ ձիթենի գոլով Ցաթեու գաւթիս տնկեցան....
Գրեան վաղընջուց փակած ոճով մեկնեցան,
եւ լապտերք եկեղեցւոյ գալստեամբ սոցին վառեցան»:

Այս բոլորը պատմելուց յետոյ նա հրաւիրում է իջնել պարտէզ տեսնել, թէ ինչպէս ամէն մի թուփ, ամէն մի ծառ կանաչացել է, ծաղկել, զարդարուել և սորա համար՝

«Յնծալ պարտի Հայաստան և խայտալ խնջոյս հողեկան,
Պարանցիկ առեալ յուսով երգել երգ հոմերական»:

Բայց որովհետեւ 1621-ին այս երանելիները մեռնում են, նա ողբում է նոցա մահը, որոնք

«Չորս գետոյ նման արբին զծարաւ Հայաստան.

Նոքա ի յադին դառնան և սոքա ի յերկնից կայեան»:

Ի վերջոյ նա բոլորին միխթարում է ասելով որ՝

«Թէպէտ սերմանողքն անկան, այլ սերմանեալքն յոյժ
արդիւնական»:

Դիտմամբ այս ներբողեանի վրայ այսչափ երկար կանգ առանք. նախ որպէս զի, ինչպէս ասացինք, այս անապատի առաջ բերած տղաւորութեան չափը որոշենք, և յետոյ ժամանակի բանաստեղծութեան այս պատառիկը ըստ արժանւոյն գնահատել կարողանանք:

Այս ներբողեանի մէջ չէ յիշուած Սիւնեաց անապատի նշանաւոր երախտաւորներէից մէկը՝ Մովսէս Աիւնեցին, և այդ երեւի այն պատճառով, որ նա համեմատաբար ուշ եկաւ միացաւ այս անապատին: Ուշ գալու պատճառը մեզ տալիս է № 549 ժամագրքի յիշատակարանը, որ ասում է. «Շրջեալ ժամանակս ինչ ի տունս յունաց առաքելաշնորհ քարոզութեամբ», ուրեմն նա իւր գործունէութիւնը սկսում է արեւմտեան Հայաստանում, ուր իւր վարժապետ Գրիգոր Կեսարացուց Կ. Պօլսի ամիրաների խնդիրքով ստանում է վարդապետական դաւադան: Յետոյ նա գալիս է Ամիդ, համբուրում է իւր մեծ վարժապետի գերեզմանը և Վանի վերայով անցնում է Տաթև. բայց այնտեղ նորան չեն ընդունում, որով և ստիպուած է լինում մտնել անապատ: Այստեղից նա՝ «Արար սկիզբ քարոզութեան և նորաձև վարդապետութեան» քանզի ընդ այն ժամանակ բնաւին բարձեալ էր վարդապետ անուն յաշխարհէն արեւելեան, բայց եթէ կային եպիսկոպոսք, էին արժանի բամբասանաց, գնալով արտաքոյ կրօնից իւրեանց. վասն որոյ բնաւին խոսկանացեալ էին մարդիկ ի գիտութենէ և ի գործոց. իսկ առաքելաշնորհ այրս այս Մովսէս իբրեւ էարկ սերմն կենաց ի տունս արեւելեան, իսկոյն արմատացաւ, աճեաց և ետ պտուղ բազմա-

պատիկ»*)։ Եւ ահա այս առաքելաշնորհ վարդապետն ևս աւելացաւ բարենորոգիչներին թուի վերայ՝ մի եռանդուն եկեղեցական, տոգորուած նոյն հաւատքով։ Այսպիսով կազմուեց բարենորոգչական մի ուժեղ հոսանք, որը բնականաբար ժամանակակիցների վերայ մեծ տպաւորութիւն կը թողնէր և երգելու ու ոգևորուելու առիթ կտար։

Մեզ համար այդ տպաւորութիւնը հասկանալի կը լինի, եթէ պատկերացնենք ժամանակի տգէտ հոգևորականութիւնը իւր վատ կենցաղով։ Այդ փչացած կեանքի տեղ այս վանքը քարոզում էր պարզ կեանք և բարեպաշտական գործեր, և իւր նպատակին հասնում էր դասատուութեամբ և քարոզչութեամբ։ Դպրոցի աշակերտները, որոնք կոչուած էին եկեղեցու արժանաւոր հովիւներ լինելու, իրենց հետ տանում էին այն հայեացքը, թէ իւրաքանչիւր վարդապետ պէտք է աշխարհոյին վայելքներից հրաժարուի, խաչ բառնալով՝ խաչելոյն հեռէի կնկուղը կրելով՝ «խորհայեաց հեղ հարանց նմանի»։

Իրենց կոչման վերայ ունեցած այս հայեացքի հետ նոքա վարժուում էին ժուժկալ կեանքին, զինուց ու մնից հրաժարուում, վանական պարզ և հասարակ կեանք էին վարում։ Այստեղ մտնում է կրկին հոգևորական տարադի գործածութիւնն ըստ աստիճանի, կարգի և պաշտաման, որ ժամանակի ընթացքում մոռացուել էր, և որն անապատի մեծ ուսուցիչները զբբերից գտել էին և գործածութեան մէջ դրել։ Որ կարևորն է՝ այստեղ սովորում էին կանոնաւոր ժամակարգութիւն և ժամասացութիւն, ձեռք բերում հմտութիւն կրօնական, եկեղեցական գրուածների, ս. գրքի, ժամագրքի, սաղմոսների ևւն։ Սակայն և այնպէս այս բոլոր զիտութիւնները, որ ժամանակի համար մեծ բան էին, ոչինչ ու խեղճ պաշար կը դառնային նոցա համար, եթէ չլինէր կենդանի ոգևորութիւն։ Նոքա, ինչպէս Դավրիժեցին է ասում՝ «Բարեաւ մնայ ասացին ամենայն կենցաղական հոգոյ, արարին զինքեանս խաչեալ աշխարհի և աշխարհ ինքեանց»։

*) Նոյն ժամագրքի յիշատակարանից։

Այսպէս դուրս եկան կարճ միջոցում (1616—1621) բաղմաթիւ աշակերտների որոնցից ամէն մէկը իւր հայրենիքի բարենորոգչութեան առաքեալը եղաւ: Ներսէս Մոկացին († 1627) Լիմ անապատն է հաստատում, որից և առաջ է դալիս Կտուց անապատ. Տաթևացի Թովմասը հովուեց Շամախին. Էջմիածնի Կարապետ եպ. վերանորոգեց Սեանը. Շամքոռի Գաւիթ եպ. հիմնեց Չարեքի անապատը. Տանձափարախ վանքի հաստատողը լինում է Արիստակէս վարդապետը, և լին.: Անշուշտ այս վանքերում տիրում էր նոյն կարգ ու կանոնը, ինչ որ Սիւնեաց անապատում: Այսպիսով բարենորոգչութիւնը տարածուում էր մի կողմից Վասպուրականում, միւս կողմից արևելեան Հայաստանի զանազան նահանգներում. և հետզհետէ մօտենում էր Այրարատին:

Բարենորոգչութեան երկու մեծ ներկայացուցիչները՝ Պողոս Մոկացին և Մովսէս Սիւնեցին, իրենց քարոզչական գործունէութիւնը շատ հեռուներն էին տարածում. «Իսկ երկոքին վարդապետք Մովսէս և Պողոս եղեն իրերաց ընկերք, իբրև առաքեալքն Պողոս և Պետրոս, լեալք ամուք հաւատոյ, շրջէին յամենայն գաւառս արևելեան աշխարհիս, քարոզէին ամենեցուն զճմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին զպրոցս, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջէին հետիոտս զնալով» (Դավր. 991): Նոյնը վկայում է և Դավրիժում գրուած Հարանց վարքի յիշատակարանը. «Բայց գոհանամ զԱստուծոյ, որ այսպիսի ժամանակիս անապատ հաստատեցաւ և երկու մեծ վարդապետ աստուածակոյս կողմանէ ետ մեզ Աստուած՝ Մովսէս և Պողոս, որ խիստ յօժար և փափաք էին եկեղեցի շինելն, զպրատուն հաստատելն և ուսուցանելն . . . և հոգեոր հայրն իմ յԱգուլիս զպրատուն շինեաց և 57 էն աւելի մանկունք կուգային, և նոցա ուսուցանողն Տ. Անդրէաս պատուական քահանայն»: Նոքա առաւելապէս Գողթան և Նախիջևանի գաւառներում էին քարոզում: Այստեղ նոքա շատ բան ունէին անելու. բացի նորանից, որ նոքա ժողովրդին աւետարանի սկզբունքները պէտք է քարո-

դէին և նորա մէջ բարեպաշտական զգացմունք զարթեցնէին, եկեղեցիներ և վանքեր նորոգէին և դպրոցներ հաստատէին, այլ և պիտի կռուէին մի կողմից տեղի յղփացած մելիքների և բարձրաստիճան հոգեւորականների դէմ և միւս կողմից մի շատ աւելի վտանգաւոր թշնամու՝ այդ կողմերում բոյն դրած ունիթոուութեան դէմ: Յիշենք, որ այնպիսի մի ժամանակ, երբ հայ եկեղեցին ընկել էր, երբ Մայր Աթոռը և հայրապետութիւնը այնչափ լքուած էր և անշքացած, երբ շատ անգամ հայ ժողովուրդը անսնում էր իւր Հայրապետին շղթայակապ և անզօր, և կաթոլիկ համայնքն ընդհակառակն ազատ և ազահոյժ, — մի այսպիսի ժամանակ ունիթոուութիւնը խիստ վտանգաւոր թշնամի էր, ի հարկէ, և հէնց դորա հաճոր աւելի քան երբեք մի բարոյական կռիւ էր պէտք՝ ուժեղ և անդրդուելի հաւատով, որ կարողանար վստահութիւն ներշնչել ժողովրդին, թէ կայ հայ եկեղեցու մէջ, հակառակ այդ ժամանակաւոր անշքութեան և անկաժութեան, մի մեծ, ներքին, հոգեւոր և ազգային ոյժ: Մի այդպիսի ոյժ ունէր իւր մէջ այս երկու մեծ առաքեալների աշակերտ Անդրէաս երէցը, որ իւր հայրերի լոյս հաւատի համար նահատակուեց Շահաբասից: Վերջինս դորանով չբաւականանալով կալանաւորել տուեց նորա վարժապետներին և ծանր տուգանքի ենթարկեց: Բայց ժողովուրդը, որ ծանաչում էր իւր առաքելաշնորհ առաջնորդներին, տուգանքն իւր վերայ վերցնելով՝ իսկոյն վճարում է և ազատում նոցա: Սորանից երևում է նոցա բարոյական մեծ ազդեցութիւնը ժողովրդի վերայ. որովհետեւ մինչ Մեղքիսէթ կաթոլիկոսը չէր կարողանում 100 թուման տարեկան աւելի հաւաքել, պարտք տալու համար՝ ամբողջ տարուայ մէջ և ամբողջ հայ ազգից, սոցա համար մի գաւառի ժողովուրդ մի քանի օրում զոհ է բերում 300 թուման:

Սոցա ձեռք բերած անընդհատ աճող հեղինակութիւնն է, պատճառը, որ Մեղքիսէթ կաթոլիկոսը՝ իւր հետ ունենալով ժամանակի տգէտ հոգեւորականութիւնը, հալածում է նրանց: Բաւական չէ, որ այդ տգէտ հոգեւորականութեան ներկայացուցիչները ամ-

բաստանում են այս վարդապետներին Երեւանի Ամիրզունէ խանի և Դավրիժի Ղառչղա խանի առաջ՝ կամենալով խափանել սոցա քարոզութիւնը և բարի գործերը, ինքը Մելքիսէթը սպառնում է քանդել տալ այն բոլորը, ինչ որ նոքա շինել են, նորերը շինելն ևս արգելելով: Բայց Պօղոսը չի վհատում: Շատ յուզիչ է այն տեսարանը, որ Դավրիժեցին բերում է 272 երեսում: Նա ամէն կողմից հալածուում է, չգիտէ ինչ անել, դիմում է իւր աշակերտներին և խորհուրդ է հարցնում, թէ ինչ անելու է. նոքա խորհուրդ են տալիս չվհատուել, այլ դիմել շահին և հրաման ստանալ թէ քարոզելու և թէ՛ եկեղեցիներ շինելու համար. այդ լսելով դիմում է շահին և մեծ ջանքերով, հակառակ կաթուղիկոսի արգելքին, իրաւունք է ստանում շարունակելու իւր գործը: Այս երեւոյթի վերայ աւելի զրգռուած Մելքիսէթ և Սահակ*) կաթուղիկոսները և իւրայինները, ինչպէս Դավրիժեցին է ասում, «Յոլով աւուրս խոշտանգեցին զնա ասելով՝ Լռեա՛ ի քարոզութենէդ... Բայց ներհակք կարի յաւէտ և բաղմահնար պարաւանդիւք, խորամանկութեան և ճշմարտութեան մեքենայիւք ճմլեալ կորացուցին զնա»: Եւ արդարեւ ներքին ծածուկ կամ յայտնի դաւադրութիւնները այս անգամ այնքան շատացան, որ յուսահատուած ստիպուած էր հրաժարուել քարոզութիւնից. նա քաշուում է անապատը և ձգնութեամբ է անցկացնում իւր մնացած օրերը: 1630-ին նա փակում է իւր աչքերը առ յաւէտ՝ իւր հակառակորդների պարտութիւնը և անկումը, իւր գործակից Մովսէսի կաթուղիկոսանալը և Մայր Աթոռի վերանորոգութիւնը տեսնելուց յետոյ:

Այս փոփոխութիւնը քսանամեայ անվերջ և յուսահատ տքնութեան և կռուի հետեանք էր, որ առաջ բերաւ Մնապատի դպրոցը: Այդ դպրոցի աշակերտները հէնց որ դուրս եկան և ցրուեցին հայրենիքի զանազան կողմերը, շատ չանցած իրենց բարի վարքով, ազգային կրօնի և եկեղեցու նա-

*) Կաթուղիկոս է եղել Մելքիսէթի կենդանութեամբ 1619—1629 թ.:

խանձախնդրութեամբ, հետզհետէ զբաւեցին ժողովրդի համակրանքը: Ժողովուրդը յարեցաւ իւր նոր առաջնորդներին և դորանով սկսուեց մի սառն անհամակրութիւն և արհամարհանք դէպի Մեւքիսէթեանք. մանաւանդ սոցա տգիտութիւնը և փաշայական կենցաղը բոլորին զզուեցնում էին: Ահա ժողովրդի այս համակրութիւնը չաւելացնելու, գուցէ և խռովութիւնների տեղիք չտալու համար, Մեւքիսէթը ստիպուած էր յետ տալ Մովսէսին իւր վեղարը և գաւազանը, որը վերջինս ուղարկել էր 'նորան' զզուելով նորա անվերջ, յայտնի ու գաղանի հալածանքներից: Բայց Մեւքիսէթը այնուհետև ևս Մովսիսին հանգիստ չի թողնում, այնպէս որ վերջինս մտածում էր թողնել արևելեան Հայաստանը և գնալ արևմուտք: Այս նպատակով նա եկաւ Երևան, մի քանի անգամ քարոզեց այդ քաղաքում և պատահամբ ծանօթանալով Ամիրգունէ խանի հետ, սորա պատուէրով ստիպուում է մնալ Երևանում՝ բնակութիւն հաստատելով ս. Անանիայի վանքում, և շարունակում է իւր գործունէութիւնը, վայելելով խանի պաշտպանութիւնը:

Այսպիսով փչացած և վերանորոգիչ հոգևորականութեան երկու խոշոր տիպաբները միմեանց մօտ էին գալիս, և ժողովուրդը շօշափելի կերպով տեսնում էր այս երկու կարգի հոգևորականների մէջ եղած հակադրութիւնը. իսկ այդ հակադրութիւնը մեծ էր: Մեւքիսէթը փող ճարելու համար վանքերի մասունքներ էր զբաւ գնում, մինչ Մովսէսը ժողովրդի առատ նուէրով կանգնեցնում էր Անանիա առաքելայի վանքը, իւր բոլոր պարագաներով և դպրոցով, ուր յաճախում էին բազմաթիւ երեխաներ, որոնց ինքն էր դաստիարակում: Երբ Մեւքիսէթը տեսնում է, որ Երևանի ժողովուրդն ևս իրանից երես է դարձնում, այլ ևս յայտնի կերպով չի շարունակում իւր թշնամական յարաբերութիւնները դէպի Մովսէսը, այլ կամենում է նորա համբաւը շահագործել՝ նորա անունով մեռնօրհնէք հռչակելով: Մեռնօրհնէքին ահագին բազմութիւն է հաւաքուում աշխարհի բոլոր ծայրերից, որով Մովսիսի համբաւը տարածւում է հեռուներ, մանաւանդ Նոր-Ջուղա և Պոլիս:

Մի հանգամանք առիթ է տալիս, որ Մովսէսը սիրելի լինի նաև յաչս Շահարասի. վերջինս իմանալով, որ Մովսէս գիտէ ազնիւ, սպիտակ մոմեր պատրաստել (Երուսաղէմումն էր սովորել անշուշտ), կանչում է իւր մօտ և հրամայում նորան սորվեցնել իւր արքունիքում ծառայողներին մի քանիսին: Այս ծառայութեան իբր վարձատրութիւն նա Զուղայի Խոջայ-Նազարի միջնորդութեամբ ստանում է Էջմիածնի փակակալութեան պաշտօնը: 1627 թուին նա հանդիսաւոր կերպով եկաւ Էջմիածին և իսկոյն սկսեց վերաշինութեան գործը: Ժամանակի բոլոր յիշատակագիրները շատ ոգևորուած գովասանքով են խօսում այդ մասին, և այդ նշանակում է, թէ Էջմիածնի վերանորոգութեան խնդիրը որչափ մօտ էր իւրաքանչիւր հայի սրտին:

№ 894 ձաշոցի յիշատակարանն այսպէս է նկարագրում Մովսիսի վերաշինութիւնները. «Սկիզբ և պատճառ ձեռնարկութեան նորոգման գերագահ Աթոռոյս երանելի հայրն մեր և պայծառ ջահն եկեղեցւոյ սրբազան Հայրապետն Հայոց Մեծն Մովսէս եղև, որ յԱստուծոյ շարժեալ ի սէր առս. Աթոռս, բազմաշարժար աշխատութեամբ անբերելի կրիւք գուն գործեալ հոգւով չափ, սկիզբն արարեալ՝ նախ մաքրեաց զսա ի տեղեկացեալ աղբից, յորում թաղեալ էր շուրջանակի, յամենայն կողմանց. զորս և ջրով ողողեաց, յարթայատակ գետին պատրաստեաց և ապա պարսպեաց, ըստ որում յաջողեցաւ կատարեաց և գերից կողմանց շինուածսն, որ ի միջոցին. սրբեաց զտաճար սրբոյն Գրիգորի ի զաղիւր ծրտոյ լուսարանս վանդակապառս յօրինեաց, հանգերձեաց սալայատակ և զկոխելի երկիր որ ի նմա. և ևս յառաջեալ ի բաց էառ զգմբէթ նորին, որոյ էր նիստ ի բնէ խախտեալ, և զբարձրաբերձ իմն տեսակաւ կանգնեաց, յորոյ կատարման և ինք փոխեցաւ: Վերանորոգութեան աւելի մանրամասն նկարագրութիւն բերում է Դավրիժեցին (ԻՎ գլ.), ուր որոշ կերպով նշանակում է իւրաքանչիւր շինութեան տեղը, դիրքը: Այսպէս, վանքի հիւսիսային և արեւելեան կողմերում նա շինում է միաբանների համար խցեր, արևմտեան կողմում հիւրանոց. հարաւային կողմում շի-

նում է սեղանատուն, փռատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց, պարսպից զատ մնացած շինութիւնները շինուում են քարով: Այս շինութիւններով վանքը շատ գեղեցկանում է. «Զաթոռ սուրբ ի յաղբեաց ի վեր առեալ, գրում է Զաքարիա Վաղարշապատցին, հաւասար արար երկնից»:

Մինչ նա այս շինութիւններով էր զբաղուած, Սահակ կաթուղիկոսը պարտքերից նեղուելով ստիպուում է փախչել Տաճկաստան 1629 թ.-ին: Նոյն տարին մեռնում է և Շահաբասը և Իրանի գահը ժառանգում է նորա թոռը Շահ Սէֆի, մի խելօք, բայց դեռ ևս մանուկ թագաւոր: Մովսէսը գնում է նոր շահին շնորհաւորելու նորա գահակալութիւնը և այդ առթիւ, Խօջայ Նազարի ձեռննտուութեամբ, նախ վերացնում է Էջմիածնի վերայ դրուած տարեկան տուրքը և ապա ժողովրդի խնդրանաց զիջանելով՝ առնում է կաթուղիկոսանալու հրովարտակ, և գալով Էջմիածին՝ օծուում է կաթուղիկոս 1629 յունուար 13 ին: Եւ ահա ամբողջ հայ աշխարհը ցնծում է, վերանորոգչութիւնը հաստատուում է Մայր Աթոռում, որից և տարածուում է արձակ և համարձակ ամէն կողմ: Իսկ վերանորոգչութեան տարածման համար Մովսէսը հէնց միայն ինքն ունէր բազմաթիւ աշակերտներ: Զաքարիա Վաղարշապատցու մի գեղեցիկ աստուածաշնչի յիշատակարանից (№ 172) մենք իմանում ենք, թէ ովքեր էին նորա աշակերտները. ա. հէնց ինքը Զաքարիան, որ ժամանակի ամենից աչքի ընկնող անձն էր, Յովհաննավանքի առաջնորդ. երկրորդ՝ Տաթևու առաջնորդ Արիստակէս Շամախեցին. երրորդ՝ Իսրայէլ վարդապետ Մեղրեցին, նկարիչ և քարտուղար. չորրորդ՝ Զուղայի առաջնորդ Խաչատուր Կեսարացին. հինգերորդ՝ Փիլիպպոս Հաղբակեցին. վեցերորդ՝ Խաչատուր Երնջակցին, եօթներորդ՝ Յակոբ Աստապատցին և ութերորդ Մեղրեցի Եսայի վարդապետը: Սոքա նորա անդրանիկ աշակերտներն էին. բայց կայ և կրտսեր աշակերտների մի խումբ № 549 ձեռագրից հանած՝ Տ. Մինաս, Տ. Յովհաննէս, Տ. Զաքարիա, Տ. Յովսէփ, Տ. Խաչատուր. աւելի ևս մանկա-

գոյններ են Տ. Յակոբ, Եսայի սարկաւագ, Ջահընկալ մանկունք՝ Առկաս, Ազար, և խոհարար Կարապետ և այլք։ Մովսէսը դեռ ևս վարդապետ ժամանակի ինչպէս տեսանք, հիմնեց Երևանի Անանիա առաքելի վանքում մի դպրատուն, կաթողիկոս լինելով՝ նա մի ուրիշ դպրատուն ևս հաստատում է Յովհաննավանքում։ Դավրիժեցին այս մասին այսպէս է վկայում. «Այլ և հոգելից ս. վարդապետն մեր Տ. Մովսէս կարգեաց դպրատուն ի մեծախառ ս. ուխտն Յովհաննավանք, ուր ժողովեաց մանկունս յոլովս, և զամենեցուն զծախսն և զպէտսն ինք հոգայր, և մանկունք անղբաղ և անխափան ուսանէին եկեղեցական ուսումնն և զգիրս աստուածաշունչ և զիմաստասիրականն, որք եղեն ամենեքին արք պիտանիք և օգտակարք աշխարհիս վարդապետք, եպիսկոպոսք, աբեղայք և երիցունք, և ամենայն վանօրայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք միաբանօք՝ աբեղայիւք և կրօնաւորօք, և գիւղօրայք վարժ երիցամք»։ Այսպիսով Սիւնեաց դպրոցի ուսուցիչը հիմք է դնում նաև Էջմիածնի դպրոցին, որից դուրս եկած աշակերտների ձեռքով, Գրիգոր Տաթևացու № 2099 քարոզգրքի յիշատակարանի համաձայն, «Շինեցան եկեղեցիք ի գեղաստանս, զարդարեցան վանօրայք պարկեշտակրօնիւք և առաքինացան միայնակեացք. և զի՞ է քեզ, դռնում է հիացած յիշատակարան գրողը, գրեթէ ամենեւինք առաքելանման էր շնորհաց տարածումն»։ Ժամանակակիցները ուրեմն զարմանում են, թէ ինչպէս արագ է տարածուում վերանորոգութիւնը արևելեան Հայաստանում Մովսիսի աշակերտների ձեռքով։ Արդարև Մովսիսի կարճատև կաթողիկոսութիւնն ևս հէնց դորանով է նշանաւոր, որ նա իւր աշակերտներին և ընդունակներին առաջ քաշելով՝ գործի է դնում, ոմանց այս կամ այն վանքի առաջնորդ է կարգում։ Նորա օրով նորոգուում է Փիլիպպոս եպիսկոպոսի ձեռքով, որին ինքն էր ձեռնադրել, Բջնու հռչակաւոր վանքը, նա Խաչատուրին Ջուղայի առաջնորդ է կարգում, Առկաս գիտնականին Սաղմոսավանքի տեսուչ, ուրիշներին նուիրակ է ուղարկում, որոնք մէկ կողմից քարոզում և միւս կողմից

նիւթական օժանդակութիւն են հասցնում իրենց հայրապետին:

Իսկ ինքը պարապ չէր նստում. Մայր Աթոռի արտաքին բարեգարգութեան վերայ հոգս տանելուց յետոյ, սկսեց ներքինի վերայ ուշք դարձնել. Դավրիժեցու վկայութեամբ «Նորոգեաց զաւերական նորոգ շինութեամբ, պայծառացոյց միաբանօք և վարդապետօք և յարմար և հաստատուն ժամակարգութեամբ»: Ժամակարգութեան մասին մի յիշատակարանում կայ հետևեալը. «Սահմանեաց տասն շաբական ասել օրհնութիւն», մինչ իրանից առաջ միայն երկուսն էին ասում: Սորանից զատ եկեղեցական անօթներով ճոխացնում է Մայր Աթոռը և գնում է զանազան կալուածքներ: Զամբուի մէջ յիշուած է, որ Մովսէս կաթողիկոսը շատ է աշխատել Վաղարշապատը վանքապատկան դարձնել, և թէպէտ մի առ ժամանակ յաջողել է զբաւել, բայց յետոյ թուրք իշխողները կրկին խլում են:

Մովսէս կաթողիկոսի այս անթիւ և անվերջ ջանքերի շնորհիւ Մայր Աթոռի հեղինակութիւնը, որ Մելքիսէթի օրով ընկել էր, կրկին բարձրանում է: Այդ պատճառաւ և Սահակ կաթողիկոսը, որը խոյս էր տուել Վան, չի յաջողում Մայր Աթոռի վարկը ձգելով՝ Ս. Կարապետի վանքում մի նոր կաթողիկոսութեան հիմք դնել: Չնայած որ Սահակը կարողանում է Կ. Պօլսի սուլթանից իր համար կաթողիկոսութեան ֆիրման հանել, բայց ժողովուրդը, երկրի հայ իշխանները ստանալով Մովսիսի կոնդակները, որոնց մէջ նա պատուիրում էր չեղկադառակել Մայր Աթոռը, հակառակ են կանգնում Սահակի ձգտումներին, և նա լքուած և անպատուած թողնում է Տաճկահայաստանը և Վրաստանի վրայով դալիս է Էջմիածին: Այստեղ նա ապրում էր իբր սոսկ միաբան, հրաժարուելով ամէն մի փառասիրական ձգտումից, և դառնագին ապաշխարում էր:

Դժբախտաբար Մովսիսի կաթողիկոսութիւնը երկար չի տևում: 1632 թուի ապրիլի 14-ին, 55 տարեկան հասակում, նա վախճանուում է: Նորա մահը պատահում է Երևանում, և դորա համար նորան թաղում են իւր հիմնած

Անանիա առաքելի վանքում: Փիլիպպոս Հաղբակեցին նորա տապանաբարի վրայ գրեց հետևեալը.

«Այս է տապան դամբարանի
Եղեալ շիրմի ճանապարհի
Տեառն Մովսիսի վարդապետի,
Ընտրեալ ս. հայրապետ, որ է տեղեալն Տաթևացի,
Նորոգող Ս. Էջմիածնի,
Բացող և շինող գմբէթի թուին ՌԶԲ»:

Սորա աշակերտներէից մէկը մի յիշատակարանում այսպէս է նկարագրում մեծ Հայրապետին. «Գոյով ամենեւին պարզ բարոյիւք և ազատական մտօք, գեղեցկազիր և փառազարդ զիմօք վայելչացեալ, զմիջինն ունելով զչափ հասակի և բոլորովին ներքին և արտաքին մարդովն արտափայլեալ, որում Սուրբն Սահակ համարեսցիր, ըստ ամենայնի բարեունակ տեսութեան, կրօնականօք և մակըստացականօք առատացեալ գովութեամբ Եղաւ պատուական մարմինն ի փոքրագոյն բլրի, որ հայի յարեմուտս կոյս ի վերայ Հրազդան գետոյ»:

Միսսմ Թ. Խոստիկեան

Ծանօթութիւն.—Մովսէս Կաթողիկոսի մահուան թուականը Դավրիժեցուց վերցնելով՝ նշանակել ենք 1632 ապրիլ 14: Բայց 1860 թուականի ճռաբաղի մէջ Մովսիսի Լեհաց Աւագիսլաւ Թագաւորին ուղղած թուղթը կայ, որը կրում է 1632 օգոստոս 30 թուականը: Արդեօք Դավրիժեցին է սխալուում, որ երեք ամիս առաջ եղած է համարում Մովսիսի մահը, թէ թղթի թուականն է սխալ նշանակուած, այսինքն փոխանակ 1631-ի, նշանակած է 1632. այդ ստուգելու միջոց չունինք, առ այժմ հաւանական է թուում Դավրիժեցու թուականը:

